«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, քաղաք Երևան, Տիգրան Մեծի 4
ՀՎՀՀ՝ 02591995
Հեռ./ֆաքս՝ /010/ 524 724

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏԻ

Համայնքի բյուջեն տեղական ինքնակառավարման մարմիններին Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման ֆինանսական ծրագիր է: Համայնքի բյուջեն ակնկալվող եկամուտների և առաջարկվող ծախսերի համապարփակ թվարկումն է գալիք ֆինանսական տարվա համար, կառավարման մարմինների յուրաքանչյուր գործառույթի գծով: Համայնքի բյուջեի որպես կառավարման միջոց կարող է օգնել համայնքին սահմանելու և գնահատելու համայնքային ստորաբաժանումների գործունեության արդյունավետությունը: Այն հնարավորություն է տալիս բարձրացնելու համայնքի կառավարման պատասխանատվությունը և հաշվետու լինելու աստիճանը: Բյուջեի առավել արդյունավետ, օգտավետ, նպատակային լինելու տեսանկյունից շատ կարևոր է բյուջեի կատարման նկատմամբ պարբերական հսկողության իրականացումը, ինչպես նաև բյուջեի կատարողականի վերլուծության ենթարկումը:

Տեղ համայնքի ղեկավարի դեկտեմբերի 12-ի N 521-Ա որոշմամբ հաստատված Տեղի համայնքապետարանի ներքին աուդիտի 2025 թվականի տարեկան ծրագրի համաձայն իրականացվել է Տեղի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետավորման գործընթացի, ծախսերի ըստ բյուջետային գործառնական և տնտեսագիտական դասակարգման կատարման կատարողական աուդիտ, որի շրջանակներում ուսումնասիրվել և վերլուծվել է կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ բյուջեի կատարման եկամուտների և ծախսերի հաշվետվությունները:

Վերլուծության արդյունքում պարզվել է, որ թեև բյուջեն կազմելիս հիմքում դրվել են նախորդ տարիների ցուցանիշների համեմատականները (դինամիկան), այդուհանդերձ արձանագրվել են գերակատարումներ և թերկատարումներ որոշ եկամուտների և ծախսային ուղղությունների մասով: Կատարված վերլուծությունները, ներկայացված բացատրություններն և պարզաբանումները ներկայացված են ստորև.

Տեղ համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման ամփոփ աղյուսակ ծախսերի գծով

Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության կատարողականի աուդիտ

Տեղ համայնքի 2024 թվականի բյուջեի ամփոփ աղյուսակ եկամուտների գծով

/հազ.դրամ/

Հոդվածների անվանումը	Եկամուտների պլան	Ճշտված պլան	Փաստացի մաս	Շեղում գումարով		
				+	-	%
1. Հարկեր և տուրքեր	**59,796**	**61,183**	**61,823**	**640**		**101.05%**
ա) անշարժ գույքի հարկ	33,796	34,452	33,257		-1,195	**96.53%**
բ) գույքային հարկեր այլ գույքից	25,060	25,060	26,856	1,796		**107.17%**
գ) տեղական տուրքեր	940	1,671	1,710	39		**102.33%**
2. Պաշտոնական դրամաշնորհներ	**199,468**	**441,242**	**441,120**		**-122**	**99.97%**
ա) Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	199,468	238,699	238,587		-112	**99.95%**
բ) Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	0	202,544	202,533		-11	**99.99%**
3.Այլ եկամուտներ	**28,809**	**72,012**	**77,056**	**5,044.00**		**107.00%**
ա) գույքի վարձակալությունից եկամուտներ	7,785	7,785	8,507	722		**109.27%**
բ Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից	0	0	460	460		
գ) վարչական գանձումներ	9,024	12,749	13,401	652		**105.11%**
դ) Մուտքեր տույժերից, տուգանքներից	0	100	200	100		**200.00%**
գ) Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	0	15,207	15,207			**100.00%**
դ) Այլ եկամուտներ	12,000	36,170	39,280	3,110		**108.60%**
Ընդամենը	**288,073**	**574,437**	**579,999**	**5,56**		**100.97%**

Տեղ համայնքի 2024 թվականի բյուջեի ամփոփ աղյուսակ ծախսերի գծով

/հազ.դրամ/

Հոդվածների անվանումը	Ծախսերի պլան	Ճշտված պլան	Փաստացի մաս	Շեղում գումարով		
				+	-	%
1.Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	114,595	351,357	332,448		-18,909	**94.62%**
3.Պաշտպանություն	13,160	1,179	200		-979	**16.96%**
4. Տնտեսական հարաբերություններ	39,560	37,508	36,759		-749	**98.00%**
5.Շրջակա միջավայրի պաշտպանություն	19,275	21,480	20,670		-810	**96.23%**
6.Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	20,493	107,210	105,201		-2,009	**98.13%**
7.Հանգիստ, մշակույթ և կրոն	4,590	13,542	12,495		-1,047	**92.27%**
8.Կրթություն	52,200	64,289	55,541		-8,748	**86.39%**
9.Սոցիալական պաշտպանություն	4,200	4,260	3,167		-1,093	**74.34%**
10.Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	20,000	10,362	0		-10,362	**0.00%**
Ընդամենը	**288,073**	**611,187**	**566,481**		**-44,706**	**92.69%**

2024 թվականին համայնքի բյուջեով նախատեսված որոշ եկամտատեսակներ գերակատարվել են, իսկ գործառնական դասակարգման որոշ ծրագրերով նախատեսված մի շարք ծախսեր թերակատարվել են, որոնց վերաբերյալ ղեկավարության կողմից ներկայացվել են ներքոհիշյալ բացատրություններն ու պարզաբանումները.

<u>Եկամուտներ</u>

2024 թվականին համայնքի բյուջեով նախատեսված որոշ եկամտատեսակների գծով հավաքագրումները գերակատարվել են, որոնց վերաբերյալ ղեկավարության կողմից ներկայացվել են հետևյալ բացատրություններն ու դիտարկումները.

1. **Գույքային հարկեր այլ գույքից /107.17 %/ 26,856 հազար ՀՀ դրամ**

   Այլ գույքից գույքային հարկերի հավաքագրման գերակատարումը 7.17 տոկոսով պայմանավորված է տարվող վարչարարությամբ: Բացի տարեկան պլանով նախատեսված բազային թվից հավաքագրվել են նաև ապառքները: Դրանց հավաքագրման համար համապատասխան աշխատակիցների կողմից մշտապես

իրականացվում է հարկատուների իրազեկում պարտքի մասին և գումարների մաս-մաս վճարման ժամանակացույցի կազմում:

2. **Գույքի վարձակալությունից եկամուտներ /109.27 %/ 8,507 հազ. ՀՀ դրամ**

Գույքի վարձակալությունից եկամուտների գերակատարումը 9.27 տոկոսով պայմանավորված է համայնքի սեփականություն համարվող հողերը նոր պայմանագրերով վարձակալությամբ հատկացնելով:

3. **Մուտքեր տույժերից, տուգանքներից /200 %/ 200 հազ. ՀՀ դրամ**

Մուտքեր տույժերից, տուգանքներից բյուջետային տողով մուտքագրված գումարները իրենցից ներկայացնում են վարչական իրավախախտման համար՝ մասնավորապես ինքնակամ, առանց շինարարության թույլտվության կառուցված շենք շինությունների համար համայնքի ղեկավարի որոշմամբ պատասխանատվության ենթարկելու արդյունքում գանձվող վճարներ:

4. **Այլ եկամուտներ /108.60 %/ 39,280 հազ. ՀՀ դրամ**

Այլ եկամուտների գերակատարումը 8.60 տոկոսով պայմանավորված է Տեղ համայնքի Կոմունալ սպասարկում և բարեկարգում ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայություններից գանձվող վճարների տարեկան նախատեսված պլանի բարձր կատարմամբ: Ծառայությունների մատուցման ծավալի ավելացումը պայմանավորված է ավտոպարկի համալրմամբ:

<u>Ծախսեր</u>

2024 թվականին ըստ գործառնական դասակարգման ներքոհիշյալ ծրագրերով նախատեսված մի շարք ծախսեր թերակատարվել են կամ չեն կատարվել, որոնց վերաբերյալ ղեկավարության կողմից ներկայացվել են հետևյալ բացատրություններն ու դիտարկումները.

1. **Պաշտպանություն /16.96 %/ 200 հազ. ՀՀ դրամ**

Պաշտպանության գծով ծախսերի թերակատարումը 83.04 տոկոսով պայմանավորված է համայնքի սահմանային տեղադիրքով, երկրում տիրող իրավիճակով: Պաշտպանության բյուջետային տողով գումարները նախատեսվում են, անսպասելի առաջացած իրավիճակների դեպքում ռեսուրսների կառավարման հնարավորության, արագ հասանելիության և քաղաքացիական բնակչության պաշտպանությունը առավելագույնս ապահովելու համար:

2. **Կրթություն /86.39 %/ 55,541 հազ ՀՀ դրամ**

Կրթության գծով ծախսերի թերակատարումը 13.61 տոկոսով պայմանավորված է համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություններին տարեկան կրտրվածքով տրամադրվող սուբսիդիայի խնայմամբ: Իսկ խնայողությունը կատարվել է Սյունիքի մարզպետարանի կողմից համայնքին որպես պետական դրամաշնորհ հատկացվող զինծառայող ծնողի, ռազմական գործողություններին մասնակցած ծնողի, ՀՀ պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելու ընթացքում կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով զոհված (մահացած) կամ ՀՀ պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելու ժամանակ անհայտ կորելու հետևանքով դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողի 1.5-5 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության ապահովում միջոցառման շահառու հանդիսացող երեխաների նախադպրոցական կրթության ապահովման համար տրամադրվող գումարների հաշվին:

3. **Սոցիալական պաշտպանություն /74.34 %/ 3,167 ՀՀ դրամ**

Սոցիալական պաշտպանության գծով ծախսերի թերակատարումը 25.66 տոկոսով պայմանավորված է դոնոր կազմակերպությունների կողմից համայնքի բնակիչներին տրամադրված բնամթերիային աջակցություններով: Սոցիալական պաշտպանության բյուջետային տողով նախատեսվում և հատկացվում են համայնքի սոցիալապես անապահով խմբի կարիքների ապահովման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

4. **Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր /0%/ 0 հազ. ՀՀ դրամ**

Համայնքի բյուջեի պահուստային միջոցներ տողով 2024 թվականի ընթացքում վարչական բյուջեի պահուստային միջոցներից կատարվել է հատկացում համայնքի ֆոնդային բյուջեին և վարչական բյուջեի համապատասխան ուղղություններին, որտեղ անհրաժեշտ է լրացուցիչ ֆինանսավորում:

<u>Առաջարկություններ</u>

Իրականացված վերլուծության արդյունքում պարզվել է, որ բյուջեի կատարողականը բոլոր էական առումներով հիմնականում ճշմարիտ է ներկայացնում Տեղ համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման եկամուտների և ծախսերի մասին 2024 թվականի ընթացքում և դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա իրական պատկերները՝ «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

Սակայն առավել արդյունավետ և արդյունքահեն բյուջեի ձևավորման նպատակով առաջարկում ենք.

- Հաջորդ տարիների համար բյուջեի նախագծման գործընթացում վերլուծվող ցուցանիշների մշակման հիմքում դնել որոշակի չափանիշներ, որոնցից են՝ Ճշտությունը (հնարավոր է արդյոք ժամանակի ընթացքում պարզել ցուցանիշի ճշտության աստիճանը), Կայունությունը (եթե ցուցանիշի գնահատումը պարբերաբար կրկնվի, արդյոք արդյունքները կայուն կլինեն), Ամբողջականությունը (արդյոք ցուցանիշը տալիս է իրավիճակի ամբողջական պատկերը), Վերահսկելու հնարավորությունը (արդյոք օգտագործողը կարող է վերհսկել և կարգավորել ծառայության ֆունկցիոնալ ցուցանիշները), Համեմատելիությունը (կարող է արդյոք ցուցանիշն օգնագործվել այլ ժամանակահատվածում կամ այլ տարածաշրջանում գնահատված ցուցանիշների հետ համեմատության համար) և այլն:
- Նախորդ տարիների հետ կապված և տվյալ տարում հավաքագրման հավանականություն ունեցող ապառքների գումարները հաշվի առնել տարեկան պլանի ձևավորման գործընթացում:
- Կատարել Բյուջեի միջոցների հաշվին պահվող նախադպրոցական, արտադպրոցական և կոմունալ կազմակերպությունների, ինչպես նաև առողջապահական կազմակերպությունների առանձին ցուցանիշների մանրամասն վերլուծություններ:
- Ապահովել իրականացվելիք ծախսերի մասով հիմնավորվածության և անհրաժեշտության աստիճանների վերլուծություններ:

21 փետրվար 2025թ.

«ՓԵՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ի
տնօրեն՝ Ա. Բաբայան